

ՔԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ**ԿԷՍ ԳԻՇԵՐ Է**

Կէս գիշեր է, լուռ է եզերքն՝ եւ անմարդի
միայն լուսին՝
Լի, լուսավարս եւ հոլանի՝ կը լողայ դեռ
վերն յուլօրէն,
Կը տարածուի փառքն իր արծաթ վրան
ննջող ովկիանոսին:

Ձեռքն ծնօտիս, աստուածօրէն ընկողմանած
մայր ջուրին քով,
Կը գինովնամ խորախորհուրդ էութենէն
անսահմանին,
Ու կ'ուռի՝ սիրտս,- վերը՝ անհուն, վարը՝
անհուն, գիշերն է ծո՛վ:

Բարի լուսնակն դեռ կ'արծըթէ մերկութիւններն
հիանալի,-
Լռութիւնը, երգը անհեղ, անդունդին մէջ
կը թաւալի,-
Խորունկը դեռ կը խորունկնայ, անեզրը դեռ
կը ծաւալի՝-:

Եւ կը բացուի անհունին մեծ ոսկեմատեանն ինծ՝
էջ առ էջ-
Հոս է գաղտնիքն, հոս է հոգին, հոս է սի՛րտը
տիեզերքին,-
Ու կ'իջնե՛մ ես, կը մխրճուի՛մ կ'ընկղմիմ ես
գիշերին մէջ:

ՏԻԳՐԱՆ ԼԵՒՈՆԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ**ԱՇՈՒՆ**

Կը թափին՝ թափին, կը թափին՝ թափին՝
Տերեւներն հիւանդ, տերեւներն դեղին,
Կը թափին հիմայ՝ կը թափին՝ կ'երթան՝
Բախտի անծանօթ, անսահման ուղղին:

Աշուն է, ա՛հ, աշուն, աշուն, աշո՛ւն-
Փառաւոր անկում - բայց՝ անկում, աւաղ-
Ու ես կը քալեմ իր հետ թեւ թեւի՝
Դեղին՝ հոգւոյս մէջ, աչքիս մէջ ծիծաղ:

Կը թափին՝ կ'երթան մարդիկն ալ վիրոտ՝
Ինչպէս աշունի տերեւներն դեղին,
Կ'աւուրին՝ կ'երթան հպարտ հոգիներ,
Ու ցաւը նոյն իսկ չեն յայտներ հողին:

ՏԻԳՐԱՆ ԼԵՒՈՆԵԱՆ

1918

